

## **ՀՀ Արագածոտնի փոխմարզպետ Նունե Մովսիսյանի ելույթը Ուշիի խմելու ջրագծի բացման ժամանակ**

Հարգելի ուշեցիներ, պարոն Շարաբխանյան, մեծարգո Ռալֆ Յիրիկյան, հյուրեր, շնորհավորում եմ բոլորիս այս գեղեցիկ օրվա առիթով: Ջուրը մեր կեցության հիմքն է, ինչպես նաև լիության ու առատության խորհրդանիշը: Մարզպետ Սարգիս Սահակյանի անունից շնորհակալություն եմ հայտնում պարոն Յիրիկյանին մարզում հերթական բարեգործությունը կատարելու համար:

Վստահ եղեք, յուրաքանչյուր համայնքում համանման ծրագիրը մարզի ղեկավարության ձեռքբերումն է: Ինչպես այս ջուրն է առատություն բերել համայնքին, այնպես էլ մաղթում եմ, որ բարերարների եւ բոլորիս ընտանիքներում լիությունն ու առատությունը մշտապես ուղեկից լինեն: Ջրի նման կյանք՝ բոլորիս: